| | |
|---|---|
| Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը) | **ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՃՏՊ105)** |
| ECTS կրեդիտ | 2 կրեդիտ |
| Դասընթացի պատասխանատու դասախոս | Կիրակոսյան Լ.Վ., ճարտ. թեկն., պրոֆեսոր,<br>Կանեցյան Ա.Գ., պատմ. գիտ. թեկն., դոցենտ |
| Ուսումնառության վերջնարդյունքներ | Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>*(գիտելիք և իմացություն)*<br>• ներկայացնել հայ զարգացած միջնադարյան ճարտարապետական մշակույթի ժամանակագրությունն ու տալ ժամանակաշրջանների ընդհանուր բնութագիրը,<br>• նկարագրել միջնադարյան ամրոցների առանձնահատկությունները,<br>• պատմել ճարտարապետական դպրոցների ձևավորման առանձնահատկությունների մասին,<br>• ներկայացնել Կիլիկյան Հայաստանի քաղաքաշինությունը և պաշտպանական կառույցների ճարտարապետությունը,<br>• քննարկել զարգացած միջնադարի հուշարձանների ծավալատարածական, համաչափական և կոնստրուկտիվ համակարգերի փոփոխությունները,<br>• մատնանշել հայկական ճարտարապետության ավանդը համաշխարհային ճարտարապետության զարգացման գործընթացում:<br><br>*(կարողություններ)*<br>• վերլուծել 9-11-րդ դդ. հայ ճարտարապետական մշակույթի ոճական և տիպաբանական առանձնահատկությունները,<br>• քննել հայ ճարտարապետական մշակույթի ավանդական և ժամանակակից դրսևորումները,<br>• բացահայտել առանձին ոճական ուղղությունների առանձնահատկությունները,<br>• ցույց տալ 12-14-րդ դդ. քարավանատների և կամուրջների շինարարության առանձնահատկությունները,<br>• վերլուծել 12-14-րդ դդ և 17-18-րդ դդ վանական համալիրների ճարտարապետական լուծումների տարբերությունն ու նմանությունը: |
| Դասընթացի թեմատիկ ծրագիր | • 9-11-րդ դդ. Հայաստանի ճարտարապետությունն ու քաղաքաշինությունը: |

| | |
|---|---|
| | • Զարգացած միջնադարի պաշտամունքային ճարտարապետության ոճական և տիպաբանական առանձնահատկությունները:<br>• Հայաստանի ամրոցաշինությունը և պաշտպանական համակարգերը:<br>• Ճարտարապետական դպրոցների ձևավորումը և նրանց առանձնահատկությունները:<br>• 12-14 –րդ դդ. վանական համալիրների ճարտարապետությունը և պաշտամունքային շենքերի նոր տիպերի ստեղծումը:<br>• 12-14-րդ դդ. քարավանատների և կամուրջների շինարարությունը:<br>• Կիլիկյան Հայաստանի քաղաքաշինությունը, պաշտպանական կառույցների ճարտարապետությունը:<br>• Ուշ միջնադարի վանական համալիրների ճարտարապետությունը: 17-18-րդ դդ. եկեղեցաշինությունը:<br>• Ուշ միջնադարի աշխարհիկ ճարտարապետությունը: Ժողովրդական բնակելի տների /ապարանքներ/, բնակավայրերի կառուցապատման սկզբունքները:<br>• Ուշ միջնադարի եկեղեցիներն ու վանական համալիրները: |
| Դասընթացի գրականության ցանկ | • Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996:<br>• Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ. և ուր., Արցախի Տիգրանակերտի հետազոտության հիմնական արդյունքները, Տիգրան Մեծ, Երևան, 2011, էջ 227-238:<br>• Всеобщая история архитектуры, /в12томах/, том 3, Ленинград-Москва, 1966.<br>• Халпахчьян О.Х., Гражданское зодчество Армении, М., 1971. |

ՃՏՊՃԺՎՎԳԱ և Պ ամբիոնի վարիչ, ճ.թ., դոցենտ՝ Է.Պ.Հարությունյան